2016թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 79.0%-ով, նախատեսված 1,048,641.7 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 827,965.4 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 220,676.3 հազ. դրամ:
Մարզի համայնքների 2016թ. բյուջեների յոթ ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2016թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	192,454.1	141,675.5	- 50,778.6	73.6
Գույքահարկ	406,090.9	324,945.0	- 81,145.9	80.0
Պետական տուրք	30,121.2	25,350.1	- 4,771.1	84.2
Տեղական տուրք	76,886.3	68,668.1	- 8,218.2	89.3
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	174,108.7	130,523.9	- 43,584.7	75.0
ա/ հողի վարձավճար	148,977.9	108,376.2	- 40,601.6	72.7
բ/ գույքի վարձավճար	25,130.8	22,147.7	- 2,983.1	88.1
Այլ եկամուտներ	168,980.5	136,802.8	- 32,177.8	81.0
Ընդամենը սեփական եկամուտներ	1,048,641.7	827,965.4	- 220,676.3	79.0

2016թ. յոթ ամիսների փաստացի հավաքագրվածի նվազման %-ը 2015թ. յոթ ամիսների փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 6.3% կամ 2015թ. համեմատությամբ պակաս է հավաքագրվել 55,803.1 հազ. դրամ:
Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2016թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Արթիկ	132,793.3	108,764.1	- 24,029.1	81.9
2	Անի	83,744.1	53,075.9	- 30,668.2	63.4
3	Ամասիա	44,333.7	29,844.7	- 14,489.0	67.3
4	Ախուրյան	181,302.0	108,086.2	- 73,215.8	59.6
5	Աշոցք	42,296.5	25,298.3	- 16,988.1	59.8

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2016թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ախուրյանի տարածաշրջանում՝ 59.6%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 68.6%:

Մարզի քաղաքային համայնքները 2016թ. սեփական եկամուտները կատարել են՝ Գյումրի քաղաքը՝ 89.1%, Արթիկ քաղաքը՝ 83.1%, Մարալիկ քաղաքը՝ 76.0%:
Մարզի թվով 57 համայնքներ չեն ապահովել 2016թ. արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 79.0%-ը, իսկ թվով 25 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:
Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:
ՀՀ պետական բյուջեով 2016 թվականին յոթ ամիսներին նախատեսված 2,554,777.2 հազ. դրամ <<Դոտացիան>> և 62,693.3 հազ. դրամ <<Այլ դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:
ՀՀ Շիրակի մարզի համայնքները 2016 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ աշխատավարձերի գծով պարտքեր չունեն:
Շիրակի մարզում բերքահավաքի ընթացքի մասին զեկուցումով հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյանը:

2016թ. մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /հա/
		2015թ.	2016թ.	
	Հացահատիկ	46665	48526	+1861
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	26436	27376	+940
	գարնանացան գարի	20229	21150	+921
	Կարտոֆիլ	4384	4567	+183
	Բանջարեղեն	1729	1900	+171
	Կերային մշակաբույսեր	14532	15651	+1119
	Տեխնիկական մշակաբույսեր	91	129	+38
Ընդամենը		67401	70773	+3372

2016թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները 2015թ. համեմատ ավելացել է 3372 հա-ով:

Համախառն բերք՝ 2015-2016թթ.

h/h	Մշակաբույսի անվանումը	Համախառն բերք /տ/		
		2015թ.	2016թ. /կանխատեսվող/	Աճ/նվազում (+/-)
1.	Հացահատիկ	150938	157000	+6062
2.	Կարտոֆիլ	114023	119000	+4977
3.	Բանջարեղեն	55236	60700	+5464
4.	Պտուղ	9531	11000	+1469
5.	Խոտ	134978	140000	+5022
Ընդամենը		464706	487700	+22994

Հացահատիկի բերքահավաք.

Ցանվել է հացահատիկ 48526 հա, 05.08.2016թ. դրությամբ հնձվել է 12000 հա, մնացել է հնձելու 36526 հա, միջին բերքը՝ աշնանացան ցորեն 30-32 ց, գարնանացան գարի 28-30 ց: Կան գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, որտեղ բերքը հասնում է 50-60 ց և ավելի:

2016թ. կարկտահարության հետևանքով տուժել են մարզի թվով 17 համայնքների շուրջ 3000 հա գյուղատնտեսական նշանակության ցանքատարածություններ, վնասը կազմում է շուրջ 900 մլն դրամ:

Մարզի թվով 25 համայնքներում տեղադրված է 64 հատ հակակարկտային կայանքներ, 2016թ. ընթացքում տեղադրվել է 4 հատ (Ոսկեհասկ 2, Մեծ Մանթաշ 2): Նախատեսվում է տեղադրել ևս 6 հատ մարզի հյուսիս-արևմտյան հատվածում:

Աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիր

2016թ. բերքի տակ ցանվել է 27376 հա աշնանացան ցորեն, նախորդ տարվա 26436 հա-ի դիմաց՝ աճ 940 հա: Ցանքատարածությունների աճին նպաստեց 2015թ. աշնանը իրականացված «Հայաստանի Հանրապետությունում 2015-2018 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը», որի շրջանակներում մարզում ցանվեց 4100 հա առաջին վերարտադրության ցորենի ցանքեր: Սերմնաբուծության ծրագրով մարզում կատարվեցին աշնանացան ցորենի բարձրորոկ ցանքեր՝

Սուպեր էլիտային վերարտադրություն	24 տ	9 շահառու	96 հա
Առաջին վերարտադրության	1230 տ	64 համայնք	4100 հա

Որոշ համայնքների կողմից կան թերացումներ 2012-2013թթ. և 2013-2014թթ. առաջին վերարտադրության ցորենի սերմացուի գումարների հավաքագրման ուղղությամբ: 2012-2013թթ. համայնքների կողմից չի հավաքագրվել շուրջ 9 մլն դրամ և 2013-2014թթ. 54 մլն դրամ /Զույգաղբյուր, Ողջի, Մարմաշեն, Իսահակյան, Լուսաղբյուր, Սարակապ, Աղին, Հայկաձոր/:

2016թ. աշնանացանը իրականացնելու համար համայնքների կողմից ներկայացվել է 1200 տոննա առաջին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուի հայտ, որը համապատասխան գրությամբ ուղարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

2016թ. գյուղատնտեսության ոլորտում իրականացվել է աջակցության ծրագրեր

Գարնանացանի աջակցության ծրագիր

2016 թվականի գարնանացանի համար Շիրակի մարզի համայնքների կողմից գնվել է՝

Սերմացու	Հատկացվել է	Իրացվել է
Գարնանացան գարի	367.8 տ	367.8 տ – 1 կգ 130 դրամ
Կորնգան	80 տ	80 տ – 1կգ 370 դրամ
Առվույտ	5 տ	1.3 տ – 1կգ 1500 դրամ

Պարարտանյութերի և դիզելային վառելանյութի աջակցության ծրագրեր

2016թ. գյուղատնտեսական տարվա համար մարզի համայնքներին հատկացվել է՝

	Հատկացվել է	Իրացվել է
Ազոտական պրարտանյութ	5690 տ	5400 տ – 1 պարկը 6000 դրամ
Ֆոսֆորական պարարտանյութ	63 տ	60 տ – 1 պարկը 7000 դրամ
Կալիումական պարարտանյութ	60 տ	55 տ – 1 պարկը 7000 դրամ
Դիզելային վառելանյութ	1 120 000 լիտր	700 000 լիտր – 1 լիտրը 280 դրամ

Ջրամբարների լցվածությունը 04.08.2016թ. դրությամբ

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 04.08.2015թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 04.08.2016թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1	Ախուրյան	525	217.34	357.33	+139.99
2	Արփի լիճ	105	53.5	50.5	-3
3	Կառնուտ	22.6	8.75	11.35	+2.6
4	Սառնաղբյուր	4.8	0.69	1.25	+0.56
5	Վարդաքար	5	1.41	2.1	+0.69
6	Թավշուտ	6	3.68	3.1	-0.58
7	Մանթաշ	8.2	3.42	7.07	+3.65
8	Ջաջուռ	0.28	0.22	0.22	0
Ընդամենը		151.88	71.67	75.59	+3.92

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի: